
«ԱՇԽԱՐՀԱՅՈՅԻ» ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Հ. Ժ.

«Աշխարհացոյցի» հայտնաբերման առաջին իսկ օրերից դրա ուսումնասիրությամբ և վերլուծությամբ զբաղվել են բազմաթիվ նշանավոր ուսումնասիրողներ¹: «Աշխարհացոյցի» տարբեր ձեռագրերի հրատարակումն սկսվում է դեռ XIX դ., և միաժամանակ էլ տեղի էր ունենում բուն տեքստի ուսումնասիրությունը: Նպատակահարմար չէ մեկ հոդվածի շրջանակում անդրադառնալ նախորդ ուսումնասիրողների բարձրացրած և քննարկած բոլոր տեսակետներին, որ գոյություն ունեն առ այսօր: Մակայն ճշմարտության դեմ չմեղանչելու համար անհրաժեշտ է նշել, որ այդ ուսումնասիրությունները որակական նոր երանգ ստացան XX դ. երկրորդ կեսից՝ առաջին հերթին շնորհիվ նշանավոր հայագետ, ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանի և մեծ հաջողությամբ նրա գործը շարունակող Է. Լ. Դանիելյանի²:

Խոսելով «Աշխարհացոյցի» բովանդակության մասին՝ դիտարկենք վերջինիս հետ կապված որոշ հանգամանքներ: Առաջին՝ «Աշխարհացոյցի» հեղինակի հարցը, որը նախկինում առիթ է հանդիսացել գիտական անվերջ բանավեճերի, երկրորդ՝ նրա աշխարհագրական օրինենացիայի կամ կողմնորոշման (երբեմն նշվում է ուղղվածության) հարցը, երրորդ, որ բխում է առաջին երկուսից՝ ստեղծման ժամանակի հարցը, թե երբ և ում կողմից (իսկ

¹ Армянская география VII века по Р. X., текст и перевод издал К. П. Патканов, СПб., 1877, Géographie de Moïse de Corène d'après Ptolémée. Texte Arménien, traduit en français par le P. Arsène Soukry Mékhitariste, Venise, 1881, Մանանդյան Հ., Խորենացու առեղծվածի լուծումը, Երկ., հ. Է, Բանասիրական ուսումնասիրություններ, Ե., 2010, էջ 269-386, (խմբ. Պ. Հ. Հովհաննիսյանի), Երեմյան Ս. Տ., «Աշխարհացոյց»-ի սկզբնական բնագրի վերականգնման փորձ [Ս], ՊԲՀ, 1972, N 4, էջ 209-230: Նույնի՝ «Աշխարհացոյց»-ի սկզբնական բնագրի վերականգնման փորձ [Բ], ՊԲՀ, 1973, N 1, էջ 238-252: Նույնի՝ «Աշխարհացոյց»-ի սկզբնական բնագրի վերականգնման փորձ [Գ], ՊԲՀ, 1973, N 2, էջ 261-274, Յակոբեան Ա., «Աշխարհացոյց» Է դարի Անանունի, Գիտաքննական բնագիր, Հանդես ամսօրեայ, Ե., Վիեննա, 2015, էջ 35-194, The Geography of Ananias of Širak («Ašxarhacoyc»). The Long and the Short Recensions. Introduction, Translation and Commentary by R. H. Hewsen, Wiesbaden, 1992:

² Տե՛ս Երեմյան Ս. Տ., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (Փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Ե., 1963, Դանիելյան Է. Լ., Հայաստանի քաղաքական պատմությունը և Հայ Առաքելական եկեղեցին (VI-VII դարեր), Ե., 2000:

ավելի ստույգ, թե երբ և ովքեր են շարադրել այն), և չորրորդ, որ առավել շաղկապված է զուտ նրա բովանդակությանը, թե վերջապես քարտեզների որի խմբին կամ տեսակին պետք է դասել այն (քաղաքական, թե՞ ֆիզիկական, կամ էլ, բացի վերջիններից, առկա են այլ քարտեզներին բնորոշ տեղեկություններ)³։ Մեր այս հարցադրումն ուղղակի անխուսափելի է, եթե հետևում ենք «Աշխարհագրյցի» բովանդակությանը՝ կապված երկրներից որևէ մեկի նկարագրության հետ։ Այստեղ կապ չունի, թե որտեղ է գտնվել կամ գտնվում տվյալ երկրի՝ Եվրոպայում կամ ներկայիս Աֆրիկայում, թե Ասիայում։ «Աշխարհագրյցի» տեքստը հուշում է մի շատ կարևոր հանգամանքի մասին, որ պատմաքաղաքական և էթնիկ նկարագրություններն ընդգրկող հատվածները պահանջում են համապատասխան գիտելիքներով «զինված» մասնագետի, իսկ ֆիզիկաաշխարհագրականը՝ վերջինիս վերաբերող մասնագետի առկայություն։ Այս տեսանկյունից հիմնախնդիրը քննարկելու պարագայում մենք մոտենում ենք վերոնշյալ հարցադրումներից առաջինի պատասխանին, որ նրա հեղինակման խնդրում առկա էր մեկից ավելի մասնագետի մասնակցություն։ Ավելի ստույգ այն պետք է շարադրված լիներ ինչպես հմուտ պատմաբանի և, որ ոչ պակաս կարևոր է, նույնպիսի գիտելիքներ ունեցող աշխարհագրագետի կողմից։ Այս կապակցությամբ Է. Լ. Դանիելյանն իրավացիորեն գրում է. «Աշխարհագրյցի» զանազան ժամանակներում արտագրված և խմբագրված ձեռագրերի առանձնահատկություններով են պայմանավորված Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի ձեռագրերում առկա ընդմիջարկությունները, որոնք նույնպես կա-րող էին տարբեր ժամանակների արգասիք լինել⁴։ Հեղինակն այս իրավացի եզրակացությանն է հանգում «Աշխարհագրյցի» մինչև այսօր առկա ձեռագրերի մանրակրկիտ և բազմակողմանի վերլուծություններից հետո⁵։ Այսպիսով, այն նախ շարադրվել է պատմահայր Մովսես Խորենացու, իսկ հետագայում լրացվել Անանիա Շիրակացու կողմից։ Չպետք է բացառել, որ վերջինս կատարել է վերախմբագրման որոշակի աշխատանքներ ևս,

³ Այս կապակցությամբ ավելի մանրամասն տե՛ս **Берлянт А. М.** *Образ пространства: карта и информация*, М., 1986, **Салищев К. А.** *Картография*, М., 1982, Ներկայումս դրանց թիվն այնքան մեծ է, որ մենք նպատակահարմար չենք համարում այդ թվարկմանն անդրադառնալ։

⁴ **Դանիելյան Է. Լ.**, նշվ. աշխ., էջ 45, տե՛ս նաև **Арутюнян А. Ж.** *К вопросу определения авторства древнеармянской карты (или "Ашхарацуйц"-а)* (Сб. материалов I международной научно-практич. конф. Интеграция мировых научных процессов как основа общественного процесса (М-1). Общество науки и творчества, Казань, 2013, сс. 1-5)։

⁵ Տե՛ս **Դանիելյան Է. Լ.**, նշվ. աշխ., էջ 31 և հաջ.։

հատկապես աշխարհագրությանը վերաբերող մասերում, եթե այդպիսիք եղել են նախնական տեքստում, որի վրա էլ աշխատել է բնագետ մատենագիրը:

«Աշխարհացոյցի» բովանդակության ուսումնասիրության ասպարեզներից է նրա աշխարհագրական կողմնորոշման խնդրի վերլուծությունը: Այս և ընդհանրապես մեզ հասած համարյա բոլոր հնագույն քարտեզների կապակցությամբ, սկսած հին բաբելոնյան «Աշխարհի քարտեզից», որը թվագրվում է մ.թ.ա. II հազ. միջնամասն ընկած ժամանակաշրջանով, Ա.Վ. Պոդոսինովն իրավացիորեն գտնում է, որ դրանք ունեն հյուսիսային կողմնորոշում (այդ թվում՝ Հիպարքոսի, Էրատոսթենոսի, Ստրաբոնի, Մարինոս Տյուրոսացու և Կլավդիոս Պտղոմեոսի գործերը, «Պետինգերյան քարտեզը» և այլն)⁶: «Աշխարհացոյցը» ևս կողմնորոշման հիմնական միջոց է համարում հյուսիսային աստղը: Այս մասին մենք տեքստում կարդում ենք. «Քանզի ի վերայ Այրեցածին բերին կենդանատեսակքն, մտանեն եւ ծագեն՝ բայց Փոքր Արջն գեր ի վերոյ կալով երկրի, ի հիւսիսա[յ]ին կողմանն՝ ասպարիսաւք հինգ հարիւր եւ երկու հինգերեկաւք...»⁷: Մակայն ուղղվածությունը չպետք է շփոթել նույն հեղինակի կողմից տեքստում տրված նկարագրության հաջորդականությունների ուղղվածությունների հետ: Այսպես, և՛ Ստրաբոնը, և՛ Պտղոմեոսը, ունենալով հյուսիսային ուղղվածություն, իրենց տեքստերում երկրների թվարկման դեպքում առաջնորդվում են արևմուտք-արևելք ուղղվածությամբ: Բայց երբ տալիս են երկրներից որևէ մեկի ներքին նկարագիրը (վարչատարածքային բաժանումները), ապա առաջինի ուղղվածությունն ընդհանրապես բացակայում է, իսկ երկրորդն այս դեպքում ևս ունի հյուսիսային կողմնորոշում: Ստրաբոնը վարչատարածքային միավորները թվարկում է՝ առաջնորդվելով պատմական իրադարձությունների ժամանակագրական հաջորդականությամբ: «Աշխարհացոյցը» ևս մայր ցամաքներն ու պետությունները թվարկում է արևմուտք-արևելք հաջորդականությամբ կամ ուղղվածությամբ (Եվրոպա, Լիբիա կամ Աֆրիկա, Ասիա) և հրաժարվում է հնում ընդունված *Ex Oriente lux* կամ **Լույսն արևելքից** հայտնի սկզբունքից:

⁶ Подосинов А. В. *Ex Oriente lux! Ориентация по странам света в архаических культурах Евразии*, М., 1999, с. 244-245, 260, 263, 266, Джак-сон Т. Н., Коновалова И. Г., Подосинов А. В. *Imagines mundi: античность и средневековье*, М., 2013, с. 125-126, 161-165 և հաջ., Арутюнян А. Ж. *Ориентация древнеармянской карты "Ашхарацуйц" (Восток (Orient). Афро-азиатские общества, история и современность*, М., 2013, № 3, с. 88-94): Այս կապակցությամբ տե՛ս նաև Душков В. А. *География и психология. Подход к проблеме*, М., 1987, с. 15 և հաջ.:

⁷ Յակոբեան Ա., նշվ. աշխ., էջ 51: Տե՛ս նաև Фрадкин Н. *Рождение карты*, М., 1959, с. 24 և հաջ., Թումանյան Բ., *Հայ աստղագիտության պատմություն*, Ե., 1964, էջ 32-49:

Նույն կերպ են վարվել նաև Ստրաբոնն ու Պտղոմեոսը: Առաջինն իր նկարագրությունն սկսում է Բրեթիայից կամ Իսպանիայից. («Աշխարհացոյցի» հեղինակները ևս առաջնորդվել են նույն սկզբունքով՝ նախ անդրադառնալով Իսպանիային կամ ավելի ստույգ՝ Սպանիային), իսկ Կլավդիոս Պտղոմեոսը շարադրանքն սկսում է՝ Բրիտանիայի նկարագրությամբ: Այս խնդրին միանշանակ պատասխան անհնարին է տալ: Երկու մատենագիրներն էլ ունեն հյուսիսային ուղղվածություն, ինչպիսին է նաև «Աշխարհացոյցին»-ը: Սակայն տեքստում նրանք կարող են ցուցաբերել տարբեր մոտեցումներ: Ստրաբոնի կողմից Իսպանիայի նկարագրությամբ սկսելը, զուցե պայմանավորված էր այն հանգամանքով, որ այս երկիրն իրեն, ինչպես նաև մյուսներին ավելի լավ էր ծանոթ, քան Բրիտանիան: Բավական է արձանագրել, որ ամենաուշը՝ Ք.ա. 197 թ., այն հանդիսանում էր հռոմեական պրովինցիա, իսկ Բրիտանիային նրանք առաջին անգամ «ծանոթացան» Ք.ա. 10. Երկրորդ կեսին՝ Հուլիոս Կեսարի Գալլական արշավանքների շրջանում: Ավելին, Կեսարը եղավ միայն նրա ծայր հարավում, իսկ Իսպանիայի երկու մասերի (արևելյան կամ մոտակա և արևմտյան կամ հեռավոր, ինչպես բաժանել էին հռոմեացիները) վերաբերյալ արդեն կային հարուստ գիտելիքներ: Այստեղ չպետք է բացառել, որ նախնական՝ խորենացիական տեքստում ևս եղել է ինչպես և Պտղոմեոսի մոտ էր, իսկ հետագայում այն ուղղվել է Շիրակացու կողմից Այստեղ չպետք է բացառել, որ նախնական՝ խորենացիական տեքստում ևս եղել է ինչպես և Պտղոմեոսի մոտ էր, իսկ հետագայում այն ուղղվել է Շիրակացու կողմից⁸:

Այստեղ առավել ուշագրավ է աշխարհագրական աստիճանների՝ միջօրեականների կամ երկայնությունների և հորիզոնականների կամ լայնությունների ներկայացման հարցը: Եթե Ստրաբոնը աստիճաններ չունի, ապա Պտղոմեոսի տեքստում դրանց մի մասն ունի աղավաղված տեսք և մեկնաբանություն: Այսպես, Բրիտանիան նա տեղադրում է 51-63⁰-ի զուգահեռականների միջև (կամ հարավ-հյուսիս ուղղվածությանը), որը համարյա թե համապատասխանում է իրականությանը: Ինչ վերաբերում է ներկայացված միջօրեականներին (կամ արևելք-արևմուտք ուղղվածությանը), ապա տեղա-

⁸ Ptolemaios. *Handbuch der Geographie. Griechisch-Deutsch: Einleitung, Text und Übersetzung, Index* / Herausgegeben von A. Stuckelberger und G. Grabhoff. 1 Teil., Einleitung und Buch 1-4, II, II-III (տրված է Բրիտանիայի նկարագիրը), II, IV-VI (տրված է Իսպանիայի նկարագիրը), 2 Teil. Bücher 5-8, V, XIII, (տրված է Հայաստանի, իսկ ավելի ստույգ Մեծ Հայքի թագավորության նկարագիրը), Basel, 2006, Страбон, География: в 17-и книгах, III, I-V (տրված է Իսպանիայի նկարագիրը), IV, IV-V (տրված է Բրիտանիայի նկարագիրը), XI, XIV (տրված է Մեծ Հայքի թագավորության նկարագիրը) Пер. Г. А. Страпановского, М., 1994:

դրում է 11-31⁰-ի միջև: Այս հարցում միանշանակ ավելի ճիշտ է «Աշխարհացոյցը», որը վկայում է «Բ. Բնաշխարհ Եւրոպիայ՝ Բերիտանաց[ւ]ոցն է. եւ են երկու կղզիք ի հիւսիսա[յ]ինն Ովկիանոս, ի վերոյ կողմանէ Սպանիո[յ] եւ Գալիոյ: Անուն արեւմտեա[յ] կղզ[ւ]ոյն՝ Ուրեոնիա 5, եւ գարէհատաձեւ ճնճղկեան՝ արեւմտեա[յ] հարաւա[յ]ին ծայրին, ութ մասին երկայնութեան, եւ յիսուն եւ ութ լայնութեան»⁹: Նույնը մենք տեսնում ենք նաև Բսպանիայի նկարագրությանը վերաբերող հատվածում¹⁰: Այստեղ «Աշխարհացոյցը» ոչ միայն ուղղում է աստիճաններին վերաբերող Պտղոմեոսի թույլ տված սխալները, այլև երկրագնդի արևմտյան ծայրամաս է համարում հենց Բսպանիան, քանզի այն ժամանակ Բոլանդիան, իսկ առավել ևս Բսլանդիան աշխարհին մնում էին անհայտ՝ *terra incognita*: Բրիտանիա ասելով՝ վերոհիշյալ մատենագիրները նկատի են ունեցել ներկայիս Անգլիան, Շոտլանդիան և Ուելսը միասին վերցրած: «Աշխարհացոյցի» միակ անճշտությունն այս հարցում այն է, որ հեղինակները սխալ են տեղադրում երկու այն կղզե-խմբերը (արշիպելագները՝ Շոտլանդական և Օրկիդեյան, որոնց վաղ միջնադարյան անվանումներն անհայտ են), և գտնվել ու գտնվում են ներկայիս Շոտլանդիայից հյուսիս: Այսպիսով, եթե առաջնորդվում ենք V-VII դդ. գոյություն ունեցած աշխարհագրական գի-տելիքների տվյալներով կամ ձեռք-

⁹ Յակոբեան Ա., նշվ. աշխ., էջ 75: Պտղոմեոսյան անճշտությունների մեկնա-բանությանն են վերաբերում Դ. Ա. Շչեգլովի աշխատությունները: *Щеглов Д. А. Родосская параллель Эратосфена и история системы климатов, Мнемон. Исследования и публикации по истории античного мира, вып. 4. Под ред. проф. Э. Д. Фролова, СПб., 2005, сс. 383-396, նույնի՝ Долгота Вавилона у Птолемея (Наука и техника: вопросы истории и теории. Тезисы XXV конференции Санкт-Петербургского отделения национально-го комитета по истории и философии науки и техники (29 ноября–3 декабря 2004 г.) т. 20, СПб., с. 128-129, նույնի՝ Долгота Рима у Птолемея // Институт истории естествознания и техники им. С. И. Вавилова. Годичная научная конференция, М., 2005, сс. 221-222), նույնի՝ Лунное затме-ние –330 (Историко-астрономические исследования, т. 30. М., 2005, сс. 200-226), նույնի՝ Система семи климатов Птолемея и география Эратосфена (Вестник древнего мира (այսուհետև՝ ВДИ, М., 2005, N 3, сс. 243-265), նույնի՝ Понятие «хорография» в античной географической традиции (Институт истории естествознания и техники им. С. И. Вавилова. Годичная научная конференция, М., 2008, сс. 576-578) և մի շարք այլ աշխատություններում:*

¹⁰ Պտղոմեոսը այն տեղադրում է 36-45⁰-ի զուգահեռականների միջև, որը համարյա ճիշտ է և 4-20⁰-ի միջօրեականների, և որը հակասում է իրականությանը: «Աշխարհացոյցում» կարողում ենք «Ա. Առաջին բնաշխարհ Եւրոպիայ[յ]՝ Սպանիա է. երեքանկիւնի ձեւով, կալով ի մէջ ծովուց՝ որպէս կղզի: Սահմանի յարեւմտից Ովկիանոսի՝ առեալ Յեդիոն Ծայրէն, որ կա[յ] յառաջին մասին յերկայնութեան յերեսուն եւ ութ մասին լայնութեանն, մինչեւ ցմիւս Ծայրն, որ կոչի Նեդիոն, որ կա[յ] ի հինգ մասին երկայնութեանն եւ քառասուն եւ վեց մասին լայնութեան: Բսկ յարեւելից սահմանի նոյնպէս Պեդիոնեա[յ]լերամբ՝ հարաւո[յ], իսկ ի հարաւո[յ] սահմանի Յունաց ծովուն՝ առեալ ի նոյն Պեդիոն[ե]ա[յ]: Յակոբեան Ա., նշվ. աշխ., էջ 73-74:

բերումներով, ապա աշխարհի ծայր արևմուտքի կապակցությամբ միանգամայն իրավացի է հայկական սկզբնաղբյուրը, որը սկիզբ կամ ծայրամաս է համարում հենց Իսպանիան:

Դժվար է միանշանակ պատասխան տալ, թե ինչու վերոհիշյալ հեղինակներն իրենց շարադրանքն սկսում են արևմուտքից և աստիճանաբար շարժվում դեպի արևելք: Այստեղ կարելի է միայն ենթադրել, որ սկսում են ամենաուշը մ.թ.ա. II դարի վերջերից, երբ օրեցօր ավելի էր ակտիվանում Հռոմի (նախ Հանրապետության, ապա և Կայսրության) քաղաքական ակտիվությունն արևելքում: Դրա վերջնական հետևանքներից դարձավ Հռոմը աշխարհի կենտրոն համարելու մտայնությունը, և ստեղծվեց «Բոլոր ճանապարհները տանում են դեպի Հռոմ» արտահայտությունը¹¹:

Շարադրանքը ապացուցում է, որ «Աշխարհացոյցում» աշխարհագրական աստիճանների շեղումներն աննշան են, եթե մենք հարցին անդրադառնում ենք այդ գիտության մեջ ներկայումս գոյություն ունեցած ձեռքբերումների տեսադաշտից: «Աշխարհացոյցի» վկայությունների ճշգրտությունն այս առումով կարելի է որակել ոսկերչական: Մնում է անել միայն մեկ օրինաչափ եզրակացություն՝ «Աշխարհացոյցի» այդ հատվածները գրվել և լրացվել են աշխարհագրության դասընթացներն անցած հմուտ մասնագետի կողմից: Վերջինս պետք է գաղափար ունենար ոչ միայն կողմնորոշումների հիմնախնդրի վերաբերյալ, այլև ճշգրտորեն, ըստ իրենց ունեցած աստիճանների (միջօրեականների և զուգահեռականների), տեղադրեր օյկումենայի սկիզբ հանդիսացող երկրները կամ բնաշխարհները: Մակայն հետագա շարադրանքում միշտ չէ, որ տրվում են նաև մյուս բնաշխարհների աշխարհագրական կոորդինատները: Այսպիսով, եթե այս սկզբնաղբյուրի պատմությանը վերաբերող հատվածները միանշանակ գրել է պատմահայր Մովսես Խորենացին, ապա աշխարհագրականը լրացրել կամ ճշգրտել է Անանիա Շիրակացին, որին պետք է համարել հայկական աշխարհագրության կամ բնագիտության հայրը: Այս տեսանկյունից բացառություն էին Մեծ Հայքը և երևի նրան հարակից պետությունները՝ Կողքիսը, որն Ընդհանուր Ասիայի 19-րդ բնաշխարհն էր, Վիրքը, որը 20-րդն էր, Աղվանքը՝ 21-րդը, Մեծ Հայքից հարավ գտնված

¹¹ Talbert, R. J. A. *Atlas of the Greek and Roman World* / Ed. Barrington, Princeton, 2000, էջ 1378 (Provinces of the Roman empire. map 100. Provinces of the Roman empire after the death of Traian (A. D. 117 քարտեզները). Edwell P. *Between Rome and Persia. The middle Euphrates, Mesopotamia and Palmyria under Roman Control*. L., 2001, էջ 65 և հաջ.: Evans R. *Roman conquests Asia Minor, Syria and Armenia*, Barnsley, 2011, էջ 10 և հաջ.:

Պարսկաստանը, որպես 29-րդ, և որոշ այլ հարակից երկրների մասին վկայությունները, այն առումով, որ ամբողջովին կարող էր շարադրած լինել Խորենացին: Սակայն երբ անդրադառնում ենք «Աշխարհացոյցում» գոյություն ունեցած երկու Սարմատիաների նկարագրությանը (Եվրոպական Սարմատիան նշված է որպես 9-րդ բնաշխարհ, իսկ Ասիական Սարմատիան՝ որպես 18-րդ երկիր), ապա միանգամից աչքի է զարնում այն, որ հիմնականում նկարագրությունն ունի ֆիզիկաաշխարհագրական և էթնիկական ուղղվածություններ¹², մանավանդ, երբ խոսվում է Ասիական Սարմատիայի մասին:

Այսպիսով ընդհանրացնելով՝ պետք է նշենք, որ «Աշխարհացոյցը» իր հիմնական բովանդակությամբ և՛ քաղաքական, և՛ ֆիզիկաաշխարհագրական քարտեզ է: Բայց միայն այս երկուսով չէ, որ սահմանափակվում է նրա բովանդակությունը: Արդի քարտեզագրական տեսադաշտից դիտարկելու դեպքում մենք «Աշխարհացոյցի» բովանդակության հետնախորքում գտնում ենք նաև աշխարհագրության մյուս բաժիններին վերաբերող ծանրակշիռ այլ վկայություններ ևս: Այն պետք է համարել միաժամանակ նաև առավել պակաս չափով ջրային ռեսուրսներին (կամ հիդրոգրաֆիային), լեռնագրությանը (օրոգրաֆիային), բնաշխարհների բնական հարստություններին և ճանապարհային քարտեզներին վերաբերող բազմաբովանդակ աշխատություն: Այս ամենից եզրահանգում ենք, որ այն չէր կարող գրվել միանգամից և մեկ հեղինակի կողմից: Սա վկայում է նաև այն փաստարկի օգտին, որ բոլոր լուրջ ուսումնասիրողներն իրենց աշխատանքներում պետք է պատշաճ վերաբերմունք ցուցաբերեն այս սկզբնաղբյուրին ևս¹³:

¹² Յակոբեան Ա., նշվ. աշխ., էջ 81-82-ում նկարագրված է Սարմատիայի արևմտյան կեսը, կամ ինչպես նշված է տեքստում՝ Եվրոպական Սարմատիան, էջ 109-116-ում տրված է Արևելյան կամ Ասիական Սարմատիայի նկարագիրը:

¹³ Խոսքն այն մասին է, որ *The History of Cartography. Vol. I. Cartography in Prehistoric, Ancient and Medieval Europe and Mediterranean* / ed. **J. B. Harley, D. Woodward**. Chicago; L., 1987, չկա գեթ մեկ բառ «Աշխարհացոյցի» մասին: Այս պատճառով էլ այն խստորեն քննադատվել է Ա. Վ. Պոդոսինովի և Լ. Ս. Չեկինի գրախոսականում: См. у Подосинов А. В. Чекин, Л. С. (ВДИ, 1990, № 3, էջ 205-216).

К ВОПРОСУ О СОДЕРЖАНИИ «АШХАРАЦУЙЦ»-А**ԱՐՄՄՅՈՆՅԱՆ Ա. Զ.****Резюме**

Детальное исследование “Ашхарацуйц”-а явствует о том, что этот источник представляет собой как политическую, так и физическую карту. Исходя из сказанного, можно заключить, что “Ашхарацуйц” был написан не только Мовсесом Хоренаци, но и Ананией Ширакаци и является источником V-VII веков.

ON THE PROBLEM OF THE CONTENT OF “ASHKHARATSUYTS”**H. HARUTYUNYAN****Abstract**

The detailed study of the content of Ashkharatsuyts” proves that this is a source of both political and physical map. This leads to the reasonable conclusion that it was written not only by Khorenatsi, but by Anania Shirakatsi too. Thus, “Ashkharatsuyts” is the source of V-VII centuries.